



4-32. Տպագրութիւն

Printed in Turkey

ՃԱՌ

ԻՆՏՐՅԱԿԱՆ



Սկիզբն իմաստաստեան
Երկուշ Տեառն :
(Արտ.)



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի Տպարանի Յ. Մեֆեհիսիակեան

— ՌՄՂԷ —

9107

2004



my with
(439
39)

3838 4. 2

1530-02

17

ՃԵՌ

3-33

ԿՐԱՐՈՅԵԿԱՆ

Ի ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ

ՏԵԱՌՆ ՄԱՏԹԷՈՍԻ ԱԶԳԱՍԷՐ

ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ



7076

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Յ. ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ

= 1848 =

3888 4.5

1717

1717

1717

3707

41

1717

Printed in Turkey

ՃԸՌ

ԲԱՐՈՅԱԿԱՆ



Առաքինութեան հարկաւորութիւնը,
օգոստոսի 1 և ծագումը:

ՆՇՄԱՐԻՏ քրիստոնէութեան
կատարեալ առաքինութիւնը
կը ծագի. և մէկ ազգին կարող
զուծիւնը զօրութիւնը և հա-
րստութիւնը, առաքինութիւ-
նով կ'ըլլայ: Մէկ ազգին առա-
քինութիւնն ալ, ամէն մէկուն
առաքինի ըլլալովն է:

Առաքինութիւնը ամէնուն աղէ-
կութիւնն ընել ուզել է: Աղէ-
կութիւնը, ընդհանուրի ըլլալով

առաքինու թիւն կ'ըլլայ, մասնա-
 ւոր մէկու մը աղէկու թիւն ընե-
 լով, շատ մը մարդոց գէշու թի-
 հասցընելը՝ անիրաւու թիւն է :
 Արնայ ըլլալ, որ մէկ աղգի աղէ-
 կու թեան համար ըրած բանըդ,
 քիչ մը մարդոց դպչի, անոնց օ-
 գուտին դպչելով, գէշու թիւն
 ըրած չես ըլլար : Առաքինու թիւ-
 նը միշտ ընդհանուրի կը նայի,
 քիչ մը մարդոց օգուտին համար,
 աղգ մը չի կործաներ :

Տարի դիտաւորու թիւնով,
 մեծ մնաս մը հասցուցիր՝ ըրածդ
 գէշ է, բայց դուն գէշու թիւն
 ըրած չես ըլլար, կամ գէշ դի-
 տաւորու թիւնով, աղէկ բան մը
 ըրիր, ըրածդ առաքինու թիւն
 է, բայց դուն առաքինու թիւն ը-
 րած չես ըլլար, ասկէց անհրա-
 ժեշտ պարտականու թիւն մը կը

ծագի , որ անխորհրդաբար բան
չընես . չըլլայ որ ակամայ ուրիշի
դէշութեան պատճառ ըլլաս : Ա-
ղէկութիւն ընելու կը ջանաս ,
բայց ձեռքէդ չի գար՝ կամ միջոց
չունիս , առաքինի ես . աղէկու-
թիւն ընելու համար ունեցած
ջանքդ հերիք է : Բայց ձեռքէդ
կուգայ , կարելի է որ ինծի մնաս
մը կը դպչի ըսելով ետ կը փախ-
չիս , աղէկ մարդ չես : Աղէկու մը
աղէկութի ընելու համար՝ շատ
մը մարդոց տունը փլցուցիր , ա-
նիրաւ ես : Հասարակաց օգուտ
մը չընելով մասնաւոր մէկու մը
մնաս մը հասուցիր , անօրէն ես :

Աղմուսսիրու թիւն ընելով ,
աղգային գործի մը վրայ սոգէտ
մարդ մը դրիր . այն մարդուն ա-
ղէկու թիւն ըրած կ'ըլլաս . բայց
աղգին կործանմանը պատճառ է .

ղար , խապար շունիս :

Մարդս պարտական է առաջ
 հօրը , մօրը , եղբարցը և իր աղ-
 գին , յետոյ ուրիշներուն : Իր
 ազգը կարօտութեան մէջ ձգող
 և ուրիշ ազգերու օգնութիւն
 ընողներուն ինչ ըսեմ , հայրը կը
 մուրացընէ՝ ինքը ուրիշներուն ու
 զորմութիւն կուտայ : Բու աղ-
 գըդ քեզի համար , ուտելիքէն
 խմելիքէն զրկելու լով , և կեղեցի-
 ներ շիներ , քրիստոնէական սք
 հաւատքը սորվեցուցեր է : Ա՛ր-
 րայէն գլուխէն կտրեր , ցուրտէն
 միտմնալով քեզի դպրոցներ շիներ
 է : Ա՛յերախտ , ազգդ իր խեղ-
 ճութիւնովը քեզ հոգացեր է ,
 դուն ինչո՞ւ ան չես հոգար : Իր
 հօրը պէտք եղած հոգը չի տանե-
 լով , ուրիշին աղէկութիւն ընե-
 լը , առաքինութիւն չէ , մէկ

կողմէն փառասիրութիւն է . մէկ
 կողմէն ալ ասերախտութիւն է .
 և անանկ ասերախտութիւն մը ,
 որով ձեռք ձգելու յուսացած
 փառքը անարդու թեան կը փոխ-
 ուի : « Պատուեա զհայր քո և
 զմայր » խօսքը անանկ աստուա-
 ծային պատուէր մըն է , որ սբ
 Նրոց մէջ գրուած ըլլալէն ա-
 ռաջ մարդոց սրտին մէջ գրուած
 է . և աստուած պաշտութեան
 համար անգամ հայրն ու մայրը
 անարդելը՝ Քրիստոս աէրն մեր
 յայտնի խօսքով պախարակեց . ա-
 սանկ ընող փարիսեցիներուն կեղե-
 ծաւոր ըսելով : Ալ յայտնի է որ՝
 մէկ մարդ մը իր ծնողացը ինչ
 պարտք ունի նէ՝ իր ազգին ալ
 նոյն պարտքը ունի . բայց մաս-
 նաւոր մարդու մը չի վայլեր որ
 իր ազգը խնամելու համար ծը-

նողքը անխնամ թողու . նմանապէս չի վայլեր որ ուրիշի աղէկութիւն ընելու համար իր ազգը անխնամ ձգէ :

Կիրքերը չարթնցած՝ առաքինութիւնը ազոց սիրտին մէջ արպաւորելը գիւրին է . աղայք ձեզի կ'ըսեմ, ձեր պարտքը, անարատ մնալ, գիտութիւն ստանալով կիրքերնիդ զսպել, և որ մը ձեր առաքինութիւնովը ազգերնուս պիտանի ըլլալն է :

Աղէկ բարք ունենալէն ետքը, առաքինութե՛ մէկ մասն ալ աշխատութիւնն է : Ամէն մարդ մէյմէկ արհեստի, կամ գիտութեան, կամ գործքի տէր ըլլալով, իր ազգին պիտանի ըլլալու է :

Աէկ ազգ մը՝ զեղխութիւնը ատելով, պարզ և խոնարհ բարք մը չունենայ նէ, իր բոլոր գիւ

տու թիւնը և արհեստին սրտու-
ղը ոչինչ կ'ըլլայ :

Առաքինու թեան մեծ թշնա-
մին զեղխու թիւնն է : Սա պէտք
է, նա պէտք է ըսելով, պէտք չե-
ղած բաները շատցնող մարդը,
շատ նեղու թիւն կը քաշէ. և ա-
մէն կերպ անիրաւու թեան ձեռք
կը զարնէ : Աւնեցածէն գոհ չըլ-
լար, ուրիշ մըն ալ ստանալ կ'ու-
զէ. շատ մը անպիտան բաներով
ամենեւին հարուստ չըլլար : Ա-
ղէկու կ'տուն մը իրեն քիչ կու-
գայ, մեծ սրալաա մը շինելու
կ'աշխատի, սրալաար շինելէն ետ-
քը, անօթներ, ձիեր, սպասաւոր-
ներ, կառքեր պէտք է, վաստը-
կելու ճամբաներուն ամէն կերպն
ալ աղէկ կուգայ, թէև անիրա-
ւու թեամբ ըլլայ : Առաջ փոխ
կ'առնէ, ետքը չիտար. մինչև

անգամ գողութեան կ'սկըսի, ա-
մէնուն հետ թշնամի կ'ըլլայ, կը
կործանէ և կը կործանի :

Մէկ ազգի մէջ զեղխութիւ-
նը թագաւորէ նէ, ամէնը զեղ-
խութեան հասնելու համար,
մէկզմէկ կը կործանեն : Վարքը
կ'աւրի, առաքինութիւնը կը վեր-
նայ, զեղխութենէ ազահու թի,
ազահու թենէ անիրաւութի կը
ծնանի, սուտ վկայներ կ'ելլան,
ամուսնական իրաւունքը կը վեր-
նայ, ամէն մարդ անողորմ և ան-
խորհմտանք կ'ըլլան : Հաս ան-
գամ գողութեան և մարդասպա-
նութեան պատճառն ալ այս է,
քիչ բանի կարօտ ըլլող մարդը,
երջանիկ և առաքինի կ'ըլլայ :

Նշխատութիւնը, ժուժկա-
լութիւնը, և կարգադրութիւ-
նը, զեղխութեան և փարթա-

մուժեան նախապաշարմունքը
 ատելով, մարդուս անանկ շահ
 մը կը գտնան՝ որ ուրիշները ան
 շահը չեն գիտեր :

Անկարգ ծախք ընելը, մար-
 դուս կասկած կուտայ, կասկածն
 ալ հոգւոյ տկարութիւն բերե-
 լով, խարդախութեան և անիրա-
 ւութե պատճառ ըլլալէն զատ,
 երիտասարդը մեծ յանցանքներու
 տէր, և ծերը խղճալի կ'ընէ :

Մեծ պարտքի տէր չըլլալու
 ճամբան, ամենեւին մանր մունր
 պարտքեր չընելն է. վաստակիդ
 մէկ մասը պահէ. անոր մի դըպ-
 չիր. փորձութեան մը կը հան-
 դիպիս, ան ատենը պէտք կ'ըլլայ :

Առտրվանց հարուստ ելլալ՝
 իրիկուան աղքատ պառկիլ կայ,
 ասանկ փորձութիւնները ազնւ-
 ւութեամբ տանողը քիչ է : Չու-

նեւորու թե՛նէ աւելի, հալարու
տու թիւնովը խեղճ ըլլողներ կան :
Չափաւորու թիւնով ապրելու
չափ, ձեռքը բան մնաց ըսինք,
այն ալ առջի ունեցած փարթա-
մու թիւնը չի կորսընցընելու հա-
մար կը հատուցեն, բացը կը մը-
նայ : Ա՛շխարհքս տուն փորձու-
թեանց է, ամէն մարդ աշխարհ-
քիս փորձու թիւնները միտքը բե-
րելով առաջվընէ բանը գիտնա-
լու է :

Փորձու թեան մը հանդիպե-
ցար, փարթամու թիւնը ձրգէ .
չափաւոր եղիր, պարզ վարք մը
վարէ . բայց միշտ շնորհքը և վա-
յելու թիւնը չի ձգելով մաքրու-
թիւնը սիրէ . մաքուր և շնորհ-
քով ըլլալէն աւելի զարդ պէտք
չէ քեզի : Ա՛ղէկ և քաղաքավար
ըլլալդ քեզի հերիք է : Քու ա-

ղէկու թիւնդ և քաղաքավարու
թիւնդ քեզ ամէնուն պատուել
կուտայ : Առաջ հարստու թեանդ
համար կը պատուէին , հիմայ
խեղացի և ազնիւ ըլլալուդ հա-
մար կը պատուեն : Անանկ զուար-
ճու թիւն մը կ'իմանաս , որ ա-
մենեւին չէիր կարծեր , բարեկա-
մու թիւնը աս վիճակին մէջ կը
սորվիս , և ճշմարիտ բարեկամ-
ներ կը գտնաս : Արջանկու թիւ-
նը ուր ըլլալը այս ճամբով կը
հասկընաս :

Արջանկու թիր աղէկու թիւ-
նով և արդարու թիւնով կը գըտ-
նուի . երջանկու թիւնը մտացա-
ծին բաներու մէջ մի փնտրուեր .
սրտի մաքրու թենէ և արդարու
թենէ աւելի երջանկու թիւն չըլ-
լար : Մինչեւ բարի և արդար
չըլլաս նէ , երջանիկ չես կրնար

ըլլալ : Վարի և արդար ըլլալու
 համար, Նստուած մեղ ստեղծեր
 է . մեր երջանկու թեան միջոցներ
 բուն մէկը արդարու թիւնն է :
 Արդարու թէ սահմանէն դուրս
 ելլելնուս պէս, թշուառու թիւ
 նը կը տիրէ : Արջանկու թիւնը
 ուր փնտրուենք նէ՛ չենք գտնար .
 մինչեւ արդարու թեան սահմանը
 չի մտնանք նէ, չենք հանգչիր .
 երջանիկ չենք ըլլար : Վայց ար
 դարու թիւնը ինչ ըլլալն ալ գիտ
 նալ պէտք է : Սէկ մարդ մը թէ՛
 առ Նստուած, թէ՛ առ ընկերն,
 և թէ՛ առ իւր անձը ունեցած
 պարտականու թիւնը վճարելով
 կ'ըլլայ արդարու թիւնը . և այս
 մտքովս՝ արդարու թիւնը առա
 քինու թիւններուն ամէնն ալ իր
 մէջը կը պարունակէ :

Արջանկու թեան համար ան .

յաղթելէ բնական փափաք մը
 ունենալնիս , Ռասկալը աղէկ
 հասկըցեր է :

« Քանզի երբ որ մէկ մարդ ուն
 հողին խելք հասցընէ որ՝ այս
 ինչ բանը զինքը իրեն գերագոյն
 սիրով սիրած բանին կրնայ հաւ
 ցընել , հարկաւորապէս ինքն ալ
 ուրախու թեամբ և սիրով անոր
 կը փաթարվի » : (Խորհրդածո-խնի
 Ռասկալայ . Սասն Ա . Յօդ . Գ . Բըշ
 Խահամար 68) :

« Հիմա քիչ մըն ալ երջան
 կու թեան կողմէն մտածեմք՝ որ
 այնքան փափաքով իր ամէն գործ
 քերուէն մէջ կը փնտրուէ : Քանզի
 ամէն մարդ երջանիկ ըլլալ կ'ու
 զէ . և այս կանոնս բացառու
 թիւն չունի : Թէպէտ այլ և այլ
 իրարմէ տարբեր միջոցներ գործ
 կ'ածեն , բայց ամէնուն ալ միտ

քը հոս կը նայի . ասոր համար է
 որ մէկը պատերազմի կ'երթայ .
 մէկալը չերթար . երկուքին ալ
 ուղածը և փափաքածը այս է . մի-
 այն տեսնելու և մտածելու ե-
 ղանակնին իրարմէ տարբեր է .
 կամքը ինչ ճամբայ բռնէ նէ՝ ա-
 մէնուն ալ վերջին նպատակը հոս
 կը նայի : Ամէն մարդոց ամէն
 գործքերուն շարժառիթը այս է .
 մինչեւ իրենք զիրենք մեռցնող
 ներուն և իրենք զիրենք կախող
 ներուն ալ դիտաւորութիւնը
 ասկէց զատ բան չի կրնար ըլլալ :
 Սակայն այսքան դարերէ ՚ի վեր՝
 որ ամէն մարդ գէպ ՚ի ասոր ի-
 րենց բոլոր ընթացքը ուղղեր են ,
 ասոր առանց հաւատքի հասնող
 բնաւ մէկ մարդ մըն ալ չի կայ :
 Ամէնն ալ տրտունջ կ'ընեն . իշ-
 խանաւոր մարդիկ , իշխեցեալնե-


ըր , ազնու աղանները , դամիկ ,
 ծեր , երիտասարդ , ուժով , տը-
 կար , դիտուն , տղէտ , առողջ ,
 հիւանդ , ամէն երկիր , ամէն ա-
 տեն , ամէն տարիքի և ամէն վի-
 ճակի մարդիկ կը գանգտին » :
 (Խորհ . Բասկալայ . Մասն Բ . Յօդ .
 Ա . ԲղԷ . 241) :

« Մեր բնական ազդմունքը մե-
 ղի կ'իմացընէ կոր , որ մեր եր-
 ջանկու թիւնը մեր մէջը փընտը-
 ուելու եմք » : (Խորհ . Բասկալայ .
 Մասն Բ . Յօդ . Ա . ԲղԷ . 244) :

« Հասարակ մարդոց և սրբոց
 կեանքը իրարու հետ այս կողմէս
 մօտութիւն ունին , ամէնն ալ
 երջանկութեան կը փափաքին . և
 տարբերութիւննին միայն՝ եր-
 ջանկութեան առարկայ բռնած
 բաներնուն վրայ է , որ անոր
 հասնելը երջանկութիւն կը սե-

3707-41

4359



պեմք : Ի՛նչ բան որ զիրենք իրենց
երջանկու թիւն սեպած բանին
հասնելու չի թողուր՝ արգելք
կ'ըլլայ նէ , ամէնն ալ անոր թըշ-
նամի կ'ըսեն :

» Աղէկը կամ գէշը՝ Աստուծոյ
կամայը համեմատ դատելու է ,
որ ո՛չ անիրաւ կրնայ ըլլալ և ո՛չ
կոյր : Մեր կամքը այս ընտրողու-
թեանս առաջնորդ բռնել չըլ-
լար , որ միշտ չարութեամբ և
մոլորութիւն լեցուն է » : (Խորհ .
Իսկուսայ . Սասն Բ . Հօր Ժէ . Բլ .
452) :

Առաքինի չեղողը , երջանիկ չի
կրնար ըլլալ , կատարեալ առաքի-
նու թեան հիմն ալ սուրբ հա-
ւատքն է : Աշմարիտ հաւատա-
ցեալ չեղողը կատարեալ առաքի-
նի չըլլար :

Կատարեալ փիլիսոփայ մը ան-

կարելի է որ անհաւատ ըլլայ :
 Աէվդօն . Տէգարդ . Մասկալ .
 Լայպնից . Պօսուէ . Ֆէնէլօն .
 Լօլէր . փիլիսոփայ էին . հաւա-
 տացեալ և հատարակ մարդոցմէ
 աւելի ջերմեռանդ էին : Աէվ-
 դօն Աստուծոյ անունը տուած
 ժամանակը գլուխը կը բանար և
 ոտք կ'ելէր : Աուն անհաւատու-
 թիւնը փիլիսոփայութի կը կար-
 ծես : Խելացի և կատարեալ փի-
 լիսոփայ մը՝ արարչութեան հա-
 ւատալէն ետքը , կոյս աղջիկան
 մը տղայ բերելուն դիւրաւ կը
 հաւատայ : Աչինջէն այսչափ ան-
 հուն էակներ ստեղծողին աղջի-
 կան մը տղայ բերել տալը դժուար
 չէ : Քու կարճ խելքդ Աստուա-
 ծածնայ կուսութեանը չի հաս-
 նիր . որովհետեւ արարչութեան
 վրայ ամենեւին չես մոմտացեր .

Աստուծոյ արարչութեան մէջ եղած հրաշալի գաղտնիքներուն տեղեակ չես :

Ռուսոն անհաւատներուն մեծըն է : Ստիկըրէ Պերնարտէն սէն Ռիյէրը , նայէ ինչ կ'ըսէ :
 « ()ը մը Ռուսոին հետ Վարիէն ըսուած լեռը գայիներ , երբ որ լեռանը գլուխը ելանք , փորեր նիս անօթեցաւ . ճգնաւորներէն առակոմնիս կերակուր ուղելու միտք ըրինք : Աերակուրի ժամանակէն քիչ մը առաջ վար ինջանք , եկեղեցի գացեր էին , Ռուսոն եկեղեցին երթանք ըտաւ . ճրգնաւորները Աստուծոյ փառաբանութի կը մատուցանէին . մենք ալ սղտիկ պահարան մը մտանք աղօթքնիս ըրինք . ճգնաւորները խուցերնին երթալ սկսեցին . Ռուսոն փափաքով մը « Աւետա

բանին ըսածը հիմայ կ'իմանամ.
 զի ուր իցեն երկու կամ երեք
 ժողովեալ յանուն իմ, անդ եմ
 ես 'ի մէջ նոցա : Հոս խաղաղու-
 թեան և երջանկութեան աղ-
 դում մը կայ որ մարդուս հոգի-
 ին մէջը կը մտնայ . ըսաւ : Քե-
 նէլօն ողջ ըլլար նէ ուղափառ
 կ'ըլլայիր ըսի . աչուքներէն ար-
 ցունք վաղելով և դողդըղալով,
 Քէնէլօն ողջ ըլլար նէ անոր փոք-
 րաւոր ըլլալու կ'աշխատէի ը-
 սաւ . (Ուսման Ընդ-նիւան . Ժառ .
 3 . ԼղԼ . 507) :

Եւ յս պատմութիւնը Ռուսօի
 մեռնելու մօտ ժամանակներն է .
 կատարեալ փիլիսոփայ մը քրիս-
 տոնէութիւնը չի կրնար ուրա-
 նալ . Ռուսոն իր գիրքերուն մէջ
 ուրացեր է : Իայց մեռնելուն
 մօտ իմացեր է :

Անհաւատներուն ամէնն ալ
 մահը մօտենալուն պէս մեղացի
 եկեր են և շատը քրիստոնեաց
 մեռեր են, հոս երեւելիներէն
 մէկ քանիին անունը տանք. Պու-
 լանժէ, Դուռէնտ, Պուլէնվիլ,
 Մարգի Տարժան, Վօնթէսքիւ,
 Վօրէռդուիս, Պիւֆֆոն, Վօն-
 թընէլ, Տամելավիլ, Թոմաս,
 Պուդէ, Լանկլ, Իրէսան, Սերսի-
 է, Իալիսօդ, Սուլավի, Լարշէլ,
 Տիտոօն ալ հաղորդու թի ուղեց,
 բայց քովը քահանայ թող չի ավին:

Վօլդէռին մահուան ատենն
 ալ ասանկ պիտի ըլլայ, որովհե-
 տեւ ետքի օրերը իւր հիւան-
 դու թէ տազնապին մէջը, խրդ-
 ճալի ձայնով մը կը պօռար Աս-
 տուծոյ երեսէն ինկած եմ, մար-
 դիկ ալ զիս չեն հողար¹: Սու-

¹ Դաօնչէն երեւելի բժիշկը մինչեւ մեռ-

սոյին խելքը ցնորեցաւ , ինքը-
ղինք մեռցուց :

Հաւատքը միշտ կը թու թե և
գիտութեան մայր եղած է . տը-
ղոց իմաստութիւն ճերոց ուժ
կուտայ : Աւր է շնորհալին , ուր
է նարեկացին , ուր է խորենա-
ցին , ուր են ազգերնիս ազգ ք-
նող սուրբ թարգմանիչները , ա-
սոնց ամէնն ալ կատարեալ քրիս-
տոնէութեամբ ազգերնիս լու-
սաւորեցին : Աէկ ազգին հոգին
հաւատքն է , հաւատքը կորսըն-
ցընելուն պէս կը մեռնի :

Արանելի սուրբ հայրապետ
ներուն ժամանակը , մեր ազգին
լուսաւորեալ դարն է . երբ որ
անօրէնութիւն թերահաւատու-

ներու ժամանակը անոր քովն էր . այսպէս
կը պատկէ :

Թիւնը տիրեց, տգիտութիւնը
Թագաւորեց, կարգաւ հայոց
պատմութիւնը երբ սուրբ և ա-
ռաքինի վարդապետներ և քրիս-
տոնեայ Թագաւորներ ունեցանք,
գիտութիւնը ծաղկեցաւ, և աղ-
գը պայծառութիւն ստացաւ .
Թերահաւատութիւն և մտու-
թիւն տիրելովն ալ կործանու մը
ետեւնուս հատաւ :

Վատարեալ քրիստոնէութե-
նէն աստուածային շնորհ մը կը
բղխի, երիտասարդներուն սիր-
տը կը մաքրէ և իմաստութեամբ
կը լեցունէ . հաւատքը իմաս-
տութեան լապտերն է :

Վայ այն մարդուն որ քրիս-
տոնէութիւնը, իրեն փռաւասի-
րութեանը և արծաթսիրութեւ
գործիք ըրեր է : Վայ այն մար-
դուն ալ որ քրիստոնէութիւնը,

աշխարհքիս կառավարու թեանը
գործիք մը կը կարծէ . երկնային
պարգեւ ըլլալուն չի հաւատար .
և Քրիստոսի աստուածու թեա
նը և Աստուածածնայ կուսու
թեանը վրայ կ'երկբայի :

Սուսօն անհաւատ փիլիսո
փայներուն ամէնէն խելացին էր .
նայէ ինչ կ'ըսէ : « Ար խոստովա
նիմ որ սուրբ գրոց վսեմու թիւ
նը ինձի կ'ապշեցրնէ . և աւե
տարանին սրբու թիւ սրտիս կ'ազ
դէ : Փիլիսոփայներուն մեծ մեծ
փառաւոր գիրքերը , աւետարա
նին քովը ոչինչ են : Այսպէս
պարզ և միանգամայն վսեմ գիրք
մը , մարդու գործք ինչպէս կըր
նայ ըլլալ : (Ա՛. Բլ . Ժա . Գ . Բ . Գ .
369) :

Իսակալը Քնի համար մար
գարէներէն , նայէ ինչ ու ժող

սպացոյցներ կը բերէ :

« Քրիստոսի համար եղած ա-
սպացոյցներուն ամէնէն զօրաւո-
րը՝ անոր վրայ եղած մարդարէու-
թիւններն են : Աստուած ալ այս
մարդարէութիւններս առատ
տուաւ . քանզի ասոնց կատա-
րում տուող գործը՝ մէկ հրաշք
մըն է որ Ակեղեցւոյ սկիզբէն
մինչեւ վերջը կը աւելէ : Աս-
տուած հազար վեց հարիւր տա-
րիի չափ ատեն Վարդարէներ
հանեց . և չորս հարիւր տարիի
չափ ժամանակ ալ բոլոր այս մար-
դարէութիւնները՝ և այս մար-
դարէութիւններուն աւանդա-
սպահ եղող ազգը ընդհանուր աչ-
խարհի վրայ ամէն գին տարտրդ-
նեց խրկեց : Ահա Յիսուսի Քը-
րիստոսի ծննդեան ժամանակին
համար եղած սխտրաստութիւն

ները ասոնք են, որուն Վերտա-
րանին բոլոր աշխարհքս հաւա-
տալու էր: Չէ թէ միայն հարկ
էր որ մարդարէութիւններ ըլ-
լան՝ ասիկայ հաւատացընելու
համար, այլ և այս մարդարէութիւններըս բոլոր աշխարհի մէջ
տարածվելու էին, որ ամէն մարդ
հաւատայ:

«Մէկ մարդ մը միայն աշխարհք
եկած ըլլար, և Քրիստոսի գա-
լլատեան ժամանակըն ու եղա-
նակը գուշակէր, և Յիսուս
Քրիստոսի գալը անոր ըրած գու-
շակութիւններուն համեմատ ըլ-
լար, ասիկայ անգամ անհուն զօ-
րութիւն մը կ'ունենար: Քայց
մենք ասկէց շատ աւելի ունիմք:
Իրարու ետեւէ յաջորդող մար-
դիկ կը տեսնեմք անընդհատ չորս
հազար տարի, որ ամէնն ալ հաւ-

տատապէս՝ և առանց փոփոխու-
թեան մէկը մէկալին ետեւէն
կուգայ, և ամէնն ալ իրարու ը-
րած գուշակու թիւնները կ'ընեն։
Ասոր հրատարակողը և քարոզողը՝
ամբողջ ժողովուրդ և ազգ մըն է .
որ չորս հազար տարի անխախտ կը
կենայ՝ ասոր համար եղած գուշա-
կու թիւները հաստատելու և ապա-
հովցրնելու համար, և այս ազգիս
վրայ ինչ սպառնալիք ըլլայ, և ինչ
հալածում որ քաշեն, անհնար է
որ ասկէ ցետ կենան անոնք . Աե-
ոհային դալուստը քարոզելու հա-
մար մէկ ազգ մըն են։ Ափկայ մէկ
ուրիշ կերպ մը զօրութի ունի։

«Քրիստոսի դալստեան ժամա-
նակը գուշակուած է հրէից ազ-
գին վիճակին կողմէն, հեթանո-
սաց վիճակին կողմէն, տաճարին
կողմէն, և ճիշդ տարիքներուն

համբանքովը :

« Մարգարէները այլ և այլ նը-
շաններ ցուցուցեր են որ Քրիս-
տոսի աշխարհք եկած ատենը պի-
տի ըլլան . հարկ էր ասանք ամե-
նը մի և նոյն ատենի մէջ ըլլային :
Ասոր համար հարկ էր չորրորդ
իշխանութիւնն ալ գար 'Մանիէ-
լի ցրցուցած եօթանասուն եօթ-
նեակները լրմնցած ատենը , և
Յուդայի ազգէն գաւազանը վեր-
նար , և Մեսիայ այն ատենը աշ-
խարհք գար : Աւ Յիսուս Քր-
իստոս ահա՛ այն ատենը աշ-
խարհք եկաւ , և Մեսիայն ես
եմ ըսաւ :

« Վուշակուած էր որ՝ չորրորդ
իշխանութեան ատենը՝ երկրորդ
տաճարին կործանու մէն և հրէից
ձեռքէն իշխանութիւնը վերնա-
լէն առաջ , և 'Մանիէլի ըսած

եօթնեակներուն եօթանասնե-
րորդին մէջ՝ հեթանոսները կըր-
թըվին, ու գան հրէից պաշտած
Նստուածք պաշտեն պիտի : Աւ-
անիկայ սիրողները իրենց թշնա-
միներուն ձեռքէն պիտի ազատ-
վին, և անոր երկիւղովն ու սիրո-
վը պիտի լեցվին :

« Յիրաւի անանկ եղաւ, որ
չորրորդ իշխանութեան ատենը՝
երկրորդ տաճարին կործանումէն
առաջ՝ և այլն, հրէից բազմու-
թիւնը Նստուծոյ կ'երկրրագգէ,
և հրեշտակային կեանք կը վարեն
աշխարհքիս մէջ. աղջիկները ի-
րենց կուսութիւնն ու կեանքը
Նստուծոյ կը նուիրեն. երիկ մար-
դիկ ամէն հեշտութիւններէ և
աշխարհային զուարճութիւններէ
ձեռք կը քաշեն : Այն բանն
որ՝ Պղատոն չէր կրնար քանի մը

ընտրեալ և բարեկիրթ մարդոց
հաճեցընել, մէկ գաղանի զօրու-
թիւն մը քիչ խօսքով նոյն բանը
հարիւր հազարներով տգէտ մար-
դոց կը հաճեցընէ :

«Մենչ են ստոնք : Մյս է որ
չատ ժամանակ առաջ գուշա-
կուած է . — Հեղից յոգւոյ խմիէ
ի վերայ ամենայն մարմնոց — (Յւ-
ժէլ . Բ . 28) : Մմէն մարդ ան-
հաւատու թեան և ցանկու թեան
մէջ ընկղմած էին . ամէն երկիր
սիրով բռնակեցաւ : Մչխանները
իրենց մեծու թեներն կը հրաժար-
վին , հարուստները իրենց բարի-
քէն ետ քաշվեր են , աղջիկները
նահատակուելու յանձնառու
կ'ըլլան , տղայք անասպատ տեղե-
րը երթալ ասրելու համար իրենց
հօրը տունը կը ձրգեն , այս զօ-
րու թիւնս ո՞ր տեղաց կուգայ :

Անկէց է որ՝ Սեսիայն եկած է :
Ահա ասոնք են անոր գալուստն նը-
շանները և գործքերը :

« Արկու հազար տարիի չափ՝
Իսրայէլացւոց Աստուածը աշ-
խարհքիս ազգաց անթիւ բազ-
մութեանն պահւած էր . և ինչ
ատենովան համար գուշակուած
էր նէ՛ բոլոր հեթանոսները այն
ատենը բազմութեամբ կուգան՝
ու այս մէկ հատիկ Աստուծոյ եր-
կրրագագութիւն կ'ընեն . մեհ-
եանները կը կործանին , թագա-
ւորները անգամ գլուխնին կը ծը-
ռեն ու խաչին կը հնազանդին :
Ինչ են ասոնք : Աստուծոյ Հո-
գին է որ բոլոր աշխարհքի վրայ
սիրուած է :

« Գուշակուած է որ Սեսիայն
պիտի գայ՝ և մէկ նոր ուխտ մը
պիտի հաստատէ . որ Ազիպտու-

սէն ելած ատեննին տրուածը
 պիտի մոռցընէ (Արե՛ճ . իգ . 7) ,
 իրէն օրէնքը չէ՛ թէ դըրսէն՝ այլ
 ամէն մէկուն սրտին մէջը պիտի
 դընէ (Ասայի . ծա . 7) : իր եր-
 կիւղը՝ որ միայն դըրսէն երեւոյթ
 մը ունէր , սըրտից մէջը պիտի
 արմատացընէ (Արե՛ճ . լա . 33 .
 լը . 40) :

«Յիսուս Քրիստոսը հրեանե-
 րը պիտի անարգէին՝ և իրենք ալ
 Աստուծմէ պիտի անարգըվէին .
 որովհետեւ ընտիր այգին խաղը-
 ղի տեղ աղոխ (Խօսօր) տուաւ
 (Ասայի . ե . 2 . 3 . 4 . և այլն) :
 Ինարեալ ժողովուրդը անհաւա-
 տարիմ և ասպերախտ և անհաւտտ
 պիտի ըլլար . — ժողովուրդ ան-
 հաւան և հակառակող — (Ասայի .
 կե . 2) : Աստուած անոնք պիտի
 կուրացընէր , որ օրհարսըկլան

լուսոյն ատեննն ալ կուրի պէս
խարխափելով պիտի քալէին (բ .
() Դէն՝ իր . 28 . 29) :

« Կեղեցին նոր սկըսած ատե-
նը պըզտիկ պիտի ըլլար , և ետ-
քը պիտի մեծնար (Լ . Գլ . 1 . և այլն) :

« Գուշակուած է որ՝ կուսպաշ-
տու թիւնը այն ատենը պիտի իյ-
նայ , և այս Սեսիայն կուռքերը
պիտի կործանէ , և մարդիկ ճըշ-
մարտին Ստուծոյ պաշտօնին պի-
տի բերէ (Լ . Գլ . Լ . 13) :

« Կուռքերուն մեհեանները
պիտի փրլչին . և ամէն աղգերու
մէջ , և աշխարհքիս ամէն կողմը
անոր չէ թէ անասուն , այլ մա-
քուր սրտարագ պիտի ընծայվի
(Սաղմ . ա . 11) :

« Կատարեալ ճանապարհը մար-
դոց պիտի սորվեցընէ (Լ . սայի .

բ . 3 : Սիփի . դ . 2 . Լայլն) :

“ Հրէից և հեթանոսաց թա-
դաւոր պիտի ըլլայ (Ս՝Ղ . բ . 6 .
8 : հա . 8 . 11 . Լայլն) :

“ Քրիստոսէ ոչ առաջ և ոչ ետ-
քը բնաւ անանկ մարդ մը եկած
չէ . որ գոնէ ասոնց մօտաւոր
մէկ բան մը ընէ :

“ Այս ըլլալիքներս գուշակող
այնքան մարդոցմէ ետքը՝ վերջա-
պէս Յիսուս Քրիստոս աշխարհք
եկաւ ու ըսաւ . ահա՛ ես եկայ .
ահա՛ ժամանակն է : Այլաւ մար-
դոց ըսաւ՝ որ մարդս իր անձէն
մեծ թշնամի չունի իրեն . զի-
րենք Աստուծմէ հեռացընողը՝
իրենց կիրքերն են . և ինքը անոնք
այն կիրքերուն բըռնու թենէն ա-
զատելու և իր շնորհքը անոնց
տալու եկեր է՝ որ ամէն մարդոց
միու թեամբը մէկ սուրբ Այկե-

ղեցի մը հաստատէ . և հրեաները և հեթանոսները մէկէն այս կէտեցւոյս մէջ բերէ . հեթանոսներուն պաշտած կուռքերը և հրեայներուն սնապաշտութիւնները վերցընէ :

«Անոնց ըսաւ . ինչ որ Վարդարէները առաջկուց իմաց տուին որ պիտի ըլլայ՝ իմ Առաքեալներս այն բաները պիտի ընեն : Հրեաները պիտի մերժուին . Այլուսաղէմ քիչ մը ետքը պիտի կործանի . հեթանոսները Աստուած ճանչնալու կարգը պիտի մըտնեն : Այլ դուք այդիին ժառանգը մեռցընելնուդ ետքը՝ Առաքեալներըս պիտի երթան անոնք այս կարգըս պիտի մըտցընեն :

«Այլքը Առաքեալները հրեայներուն ըսին . դուք պիտի երթաք անէճքի տակ իյնաք . հե-

Թանոսներուն ալ ըսին, դուք ալ
 Մտուած պիտի ճանչնաք :

« Մտոր ամէն մարդիկ կը հակա-
 ռակին անանկ հակառակութիւն
 որ մարմնաւոր ցանկութեան յա-
 տուէ է : Հրէից և հեթանոսաց
 այս թագաւորս երկու կողմէն
 ալ անարդարած և աչքէ ինկած
 է . որ ամէնքը ասիկայ մեռցընե-
 լու համար խօսքը մէկ կ'ընեն :
 Աշխարհքի մէջ որքան մեծ բան
 կայ նէ՛ ամէնն ալ մէկ կ'ըլլան ,
 այս նորածին կրօնքիս դէմ կը դը-
 նեն . իմաստունները , խելօք
 մարդիկ , թագաւորները , ոմանք
 դէմ կը դրբեն , ոմանք կը դատա-
 պարտեն , և ոմանք ալ կը մեռցը-
 նեն : Այս ամէն հակառակու-
 թիւններըս ըլլալով ալ՝ ահա՛ Յի-
 սուս Քրիստոս քիչ ատենի մէջ
 ամէնուն վրայ ալ տիրելով հրէա-

կան պաշտօնը Արուսաղէմի մէջ
կ'աւրէ՛ որ այդ պաշտօնին կեդ-
րոնն էր , և այն տեղը իրեն առա-
ջին Ակեղեցին կը հաստատէ :
Առոց պաշտօնն ալ Հռոմէն կը
վերցընէ՛ որ այս ալ կռապաշտու-
թեան կեդրոնն էր , և իր գլխա-
ւոր Ակեղեցին հոն կը դընէ :

“ Պարզ և տկար մարդիկ , ինչ
պէս էին Առաքեալները և առա-
ջին քրիստոնեայները , ամէն աշ-
խարհային բռնութեանց դէմ
կը դընեն . թաղաւորները և
խելացիները և իմաստունները ի-
րենց տակը կ'առնեն , և անանկ
հաստատութիւն գտած կրոն-
ապաշտութեան հիմը կը խախտեն :
Եւ այս ամէնըս միայն գուշակող
բանին զօրութեամբը կ'ըլլայ :

“ Հրեայները Յիսուս Քրիս-
տոսը Արեօիայ շընդունելու հա-

մար մեռցուցած ատեննին՝ անոր
 Անսիայ ըլլալուն վերջին հաստա-
 տու թիւնը տուին ։ Այլ անիկայ
 չի ճանչնալու վրայ յամառելով
 նին՝ անոր անանկ վկայներ եղան ,
 որ մարդ բան չի կրնար ըսել ա-
 սոնց տուած վկայութեանը ։ Այլ
 անիկայ այն ատենը մեռցրնելով
 նին՝ և մինչեւ հիմա ուրանալով
 նին՝ մարգարէութիւններուն կա-
 տարում տուին ։

« Այսքան մասնաւոր պարա-
 գայները գուշակված տեսնելով
 ո՞վ կրնայ Քրիստոսը չի ճանչնալ ։
 Քանզի ըսուած է որ , « Աէկ
 կարապետ մը պիտի ունենայ
 (Աճառ . գ 1) ։ Տղայ պիտի ծը-
 նանի (Ասայի . թ . 6) ։ Բեթլէ-
 հէմ քաղաքը պիտի ծնանի (Աճ-
 սիա . ե . 2) ։ Յուդայի ցեղէն
 պիտի ծագի (Օճն . խթ . 8 . և

այլն) : Դաւթի աղղկէն պիտի դայ
(Բ . թ՝ 43 . է . 12 . և այլն : Այս-
պի . է . 13 . և այլն) :

Ղլխաւորասպէս Արուսաղէմի
մէջ պիտի երեւի (Աղլա . դ . 1 :
Ա՛ 46 . Բ . 10) :

« Իսելացիներն ու իմաստուն-
ները պիտի կ'ուրացնէ (Այսպի .
դ . 10) : Ա՛ դքատներուն և սրդ-
տիկ մարդոց պիտի քարոզէ Ա՛ւե-
տարանը (Այսպի . կա . 1) : Կոյ-
րերուն աչքը պիտի բանայ՝ և
հիւանդները պիտի կենդանացը-
նէ և առողջացնէ (Այսպի . լե .
5 . 6) : Ա՛ ութը մնալով սրբտե-
րին հատնողները լոյսը պիտի հա-
նէ (Այսպի . խբ . 16) :

« Կատարեալ ճանապարհ պիտի
սորվեցնէ (Այսպի . լ 21) : Ա՛ւե-
թանոսներուն վարպետ և ուսու-
ցիչ պիտի ըլլայ (Այսպի . ծե . 4) :

Աշխարհքիս մեղացը համար զոհ
 պիտի ըլլայ (Աստուծոյ . ճգ . 5) :
 Հիմը գրուելու պատուական
 վէճ պիտի ըլլայ (Աս . իը . 16) :
 Վէճ գլորման և քար գայթակ
 զուժեան պիտի ըլլայ (Աստուծոյ .
 ը . 14) : Արուսաղէճ այս քա
 թիս պիտի զարնըլի (Աստուծոյ . ը .
 15) : Շէնքը շինողները այս քարս
 ետ պիտի ձգեն (Սղ . ճժէ . 22) :
 Աստուած այս քարիս անկիւնը
 գլուխ պիտի ընէ (անդ) : Այս
 սինքն՝ հրեաներն ու հեթանոս
 ները մի և նոյն Աստուածը պաշ
 տելու ասոր միջնորդութեամբը
 պիտի միաբանին : Այս քարս պի
 տի մեծնայ , ահագին լեռ մը
 պիտի ըլլայ . և բոլոր երկիրըս
 պիտի լեցընէ (Սան . ը . 35) :

Դ Ասանկ ալ գուշակուած է
 արհամարհըլիը (Սղ . ճժէ . 22) .

չի ճանչցրիլը (Լ, սայի . ծգ . 2 .
 3) . մատնըլիլը (Սաղմ . իս . 10) .
 ծախուլիլը (Օ, սի . ժա . 12 .) .
 ապտակուլիլը (Լ, սայի . ծ . 6) .
 ծաղրուլիլը (Լ, սայի . լգ . 16) . հա-
 զար կերպ տառապանք ու նե-
 ղութիւն քաշելը (Սաղմ . կը . 28) .
 լեղի խմելը (Սաղմ . կը . 22) .
 ձեռքվըներն ու ոտվըները ծակ-
 վիլը (Սաղմ . իա . 17) . երեսը
 թըքնելնին (Լ, սայի . ծ . 6) . մեռ-
 ցրնելնին (Դ, սն . թ . 26) . հա-
 գած լաթերը վիճակով բաժանել-
 նին (Սաղմ . իա . 19) :

* Երրորդ օրը յարութի առ-
 նելը (Սաղմ . ժե . 10 . Ուէ . գ .
 3) : Երկինքը ելելը (Սաղմ . իս .
 6 . կէ . 19) . Հօր Լստուծոյ աջ
 կողմը նստելու համար (Սաղմ .
 ճթ . 1) :

* Թագաւորներուն անոր դէմ

դէնք առնելը (Սաղմ. Բ. 2) :
 Հօր Աստուծոյ աջ կողմը կենա-
 լով իրեն թշնամիները յաղթելը
 (Սաղմ. ՃԹ. 5) : Աշխարհքիս
 թագաւորներուն՝ ու ամէն ժո-
 ղովրդոց անոր երկրոյագուծիւն
 ընելիքնին . (Սաղմ. Հա. 11) :
 Հրեայներուն ազգաւ մնալիքը
 (Լւրեմ. Լա. 36) . թափառական
 (Աճալ. Թ. 9) . և առանց թա-
 գաւորի և առանց սեղանոց և
 առանց զոհի (Ուլե. Ե. 4) . և
 առանց մարգարէի (Սաղմ. Հգ. 9)
 մնալիքնին . փրկուծեան ըս-
 տասելնին և շի կրնալ գտնելնին
 (Ասայի. ՃԹ. 9 : Լւրեմ. Ը. 15) :
 » Աիայն Աեփայն մէկ ըն-
 աիր՝ սուրբ՝ և ուրիշներէն զառ-
 ուած մեծ Ժողովուրդ մը պիտի
 երեւան հանէր , անոր առաջնոր-
 դէր և սնուցանէր , և հանգըս-

տեանն և սրբութեանն տեղը պիտի խօթէր, և Աստուծոյ համար պիտի սրբէր, Աստուծոյ տաճար պիտի ընէր, Աստուծոյ հետ պիտի հաշտեցընէր, մեղաց ծառայութենէ պիտի ազատէր՝ որ յայտնապէս մարդուս վրայ կը տիրէ, այս ժողովրդեանս օրէնքներ պիտի տար, և այս օրէնքներըս անոնց սրտին մէջը պիտի տըպաւորէր, անոնց համար ինքը զինքը Աստուծոյ պիտի նուիրէր, անոնց համար պիտի պատարագուէր, ինքը պիտի ըլլար անբիծ զոհ՝ և զոհ ընող քահանայ, ինքը զինք պիտի զոհէր, իր մարմինը և արիւնը պիտի պատարագէր, բայց Աստուծոյ նուիրածն ալ հաց ու գինի պիտի ըլլար։

Յիսուս Վրիստոս ասոնք ամէնն ալ ըրաւ։

«Պուշակուած էր որ՝ աշխարհ
 քիս՝ վրայ մէկ Փրկիչ մը պիտի
 գայ և սատանային գլուխը պիտի
 ջախջախէ, և իր ժողովուրդը ա-
 նոնց մեղքերէն պիտի ազատէ .
 —Նա փրկէ զիսրայէլ յամենայն
 նեղութեց նորա — (Սաղմ. Ճիթ .
 8) : Նոր կտակ մը պիտի ըլլայ՝ որ
 յաւիտեան պիտի մնայ . մէկ ու-
 ըիշ կերպ քահանայութիւն մը
 պիտի ըլլայ Սեւքիսեդեկի կար-
 գովը . այս ալ յաւիտենական
 պիտի մնայ : Քրիստոս պիտի ըլ-
 լայ փառաւոր , կարող , զօրաւոր ,
 բայց անանկ ալ աղքատ և խեղճ՝
 որ պիտի ճանչնալը դժուար ըլ-
 լայ . ինչ որ է նե՝ պիտի չի գիտ-
 նան . պիտի անարգեն և պիտի
 սպաննեն . և իրեն ժողովուրդը
 զինքը ուրանալէն ետքը իրեն ժո-
 ղովուրդ պիտի չըլլայ . կռատաշու-

ները անիկայ պիտի ընդունին և անոր պիտի դիմեն . Սիօն քաղաքը պիտի ձգէ , և կռտպաշտութեան կեդրոն եղած տեղը պիտի թագաւորէ . սակայն հրեայներն ալ միշտ պիտի մնան : Յողայի ազգէն պիտի ծնանի , և աշխարհք եկած ատենը հրեայները թագաւոր պիտի չունենան :

» Այլ անգամ մտածէ որ՝ աշխարհքի սկիզբէն սկսելով՝ անընդհատ կերպով միշտ ակնկալու թիւն կայ որ Աստիայն պիտի գայ , և անոր երկրպագութիւն կ'ըլլուի : Առաջին մարդը մեղքինկածին պէս՝ այս խոստումս անոր եղաւ . և անկէց ետքը ատեն ատեն մարդիկ ելան , որ ըսին թէ՛ Աստուած իրենց յայտները էր որ իր ժողովուրդը ազա-

տելու համար Փրկիչ մը պիտի
 ծնանի : Անոնցմէ ետքը Աբրա-
 համ եկաւ և ըսաւ թէ, ինձի
 յայտնուեցաւ որ ինձի ծնանե-
 լու տղուս ցեղէն պիտի գայ Աե-
 սիայն : Յակոբ տասն և երկու
 զաւակ ունէր . յայտնեց որ՝ Յու-
 դա անուն տղին ցեղէն աշխարհք
 պիտի գայ : Այսքը Սալսէս և մե-
 կալ Վարդարէները եկան , անոր
 աշխարհք գալուն ժամանակը և
 կերպը իմացուցին : Բսին որ՝ ի-
 բրենց օրէնքը մինչեւ Աեսիային
 տալու օրէնքին ատենը պիտի քը-
 շէր . անոր պատրաստու թիւն մըն
 էր : Այլ ասանկով անոնց օրէնքը՝
 և Աեսիայինը՝ որուն իրենց օ-
 րէնքը միայն պարզ խոստմունք
 մըն էր , աշխարհքի վրայ պիտի
 յաւիտեան մնայ , և իրօք ալ
 միշտ մնացած է , և վերջապէս

Քրիստոսի գալստեանը համար
ինչ պարագայներ իմացուցեր է-
ին նէ՝ Քրիստոսի գալստեանն ալ
նոյն պարագայները տեսնուե-
ցան : Ասիկայ զարմանա լի բան է :

» Պիտի ըսես . թէ որ այս բա-
ներս յայտնի կերպով հրեանե-
րուն գուշակեցին նէ՝ հրեայնե-
րը ինչո՞ւ չեն հաւատար : Այս
ասանկ յայտնի բանի մը գիմադ-
րու թիւն ընելնուն համար ինչո՞ւ
բնաջինջ չեղան : Պատասխան
կուտամ որ՝ ասոնց երկուքն ալ
ասանկ ըլլալիքը առաջկուց գու-
շակուած է . թէ՛ ասանկ յայտնի
բանի մը չի հաւատալիքնին , և
թէ՛ բնաջինջ չըլլալիքնին : Ալ
Մեսիային համար ասկէց ալ ա-
ւելի փառաւոր բան չի կրնար ը-
լլալ . քանզի միայն մարգարէ
գտնուիլը հերիք չէր՝ պէտք ալ

էր որ՝ անանց Մարգարէութիւնն
 ները կասկած չի վերցընելու կեր-
 պով մնան : Աւրեմն՝ այս ալ Քը-
 րիստոսի գալտեանը և կրօնից
 ճշմարտութեանը ասպացոյց մըն
 է :

» Մարգարէները Քրիստոսի
 վրայ ըրած մարգարէութիւններ
 ինչ զատ՝ ուրիշ մասնաւոր մար-
 գարէութիւններ ալ ըրին . որ-
 պէս զի՝ Մեսիային համար ըրած
 մարգարէութիւննին առանց ա-
 սպացոյցի չի մնայ . և մասնաւոր
 բաներու վրայ ըրած մարգարէ-
 ութիւննին ալ անպտուղ չելէ :

» Հրեայները կ'ըսէին . — Չիք
 մեր թագաւոր բաց ՚ի կայսերէ —
 (Յովհ . ԺԹ . 15) . անանկ է նէ՝
 Յիսուս Քրիստոսը Մեսիայ էր .
 որովհետեւ ունեցած թագաւոր-
 նին օտարազգի էր . և իրենք ալ

ուրիշ թագաւոր չէին ուղեր :

» Կանխէլի ըսած եօթանասուն
եօթներորդներուն որիկէց ըսկը-
սուիլը՝ մարգարէութեան խօսքե-
րուն մթութեանը համար անու-
րոշ է . ժամանակագիրներուն
կարծեաց տարբերութեանը հա-
մար ալ վերջացած ճիշտ տարին
անորոշ է : Կայց այս կարծիքնե-
րուն տարբերութիւնը ամէնը քսան
տարիի վրայ է :

» Յիսուսի Քրիստոսի աղքա-
տութիւնը ցրցընող Սարգարէ-
ներն են որ՝ անանկ ըսած ատեն-
նին անիկայ համօրէն ազգաց ալ
տէր կը ցրցընեն (Կայի . ծգ . 2 .
Էայլն : Օպար . թ . 9 . 10) :

» Քրիստոսի գալու ժամանակը
մարգարէութիւնը ցրցընող Սարգա-
րէները՝ Քրիստոսը իբրեւ տէր
և չարչարանք քաշող կը ցրցընեն .

ամսերուն վրայ՝ և իբրեւ դատաւոր չեն ցրցրներ : Այլ փառաւորութիւն և աշխարհքի ազգերուն վրայ դատաւորական իշխանութիւն բանեցրնելը գուշակողները՝ գալուն ժամանակը չեն յայտներ :

» Անսխայի համար մեծութեւ և փառաւորութեան խօսք ըլլայ նէ՛ յայտնի է որ անոր աշխարհք դատելու համար գալուն վրայ է խօսքը . փրկելու համար գալուն վրայ չէ՞ » (Ասայի . կղ . 15 . 16) :

Արծեմ այսչափ զօրաւոր ապացոյցներով հաստատեալ հաւատքի մը ճշմարիտ ըլլալուն վերայ տարակոյս չի մնաց :

Ճշմարիտ քրիստոնեայ ըլլանք զաւկներնուս գիտութիւն սորվոցնելէն առաջ ճշմարիտ քրիստոնէութիւնը սորվոցնենք :

Քրիստոնէութիւնը գիտու
 լալին աղբիւրն է՝ որովհետեւ
 խոնարհութեան և համեստու
 թեան շնորհք մը տալով, մար
 դուս վրայ զգաստութիւն մը կը
 բերէ. զգաստութիւնն ալ խոր
 հրրդածութեան տեղ տալով
 միտքը կը լուսաւորէ և գիտու
 թեան ընդունակութիւն կու
 տայ :

Յ. Ս. Տ.



